***Հավելված 1***

*Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի*
*ավագանու 08.05.2025թ. N 61-Ա որոշման*

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (այսուհետ՝ համայնք) խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և իրականացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգով սահմանվում են Աշտարակ համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման հետ կապված հիմնադրույթները և կարգավորումները:
3. Սույն կարգը սահմանում է սոցիալական ծառայությունների ցանկը, շահառուների ընտրության չափանիշները, ինչպես նաև համայնքի կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների տեսակները:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սոցիալական աջակցության վերաբերյալ համայնքի կամավոր խնդիրները լուծելու նպատակով համայնքի կողմից կարող են՝

1) տրամադրվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայությունները, բացառությամբ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված նպաստների կամ այլ դրամական օգնությունների տրամադրման.

2) մշակվել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության չսահմանած այլ սոցիալական ծառայությունների տեսակներ.

3) իրականացվել կամավորների հավաքագրում, համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում օրենսդրությամբ սահմանված կարգով կամավորների ընդգրկում և նրանց աշխատանքի վերահսկում.

4) «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ, 9-րդ և 10-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով նախատեսված սոցիալական ծառայությունները կարող են տրամադրել նաև դրամական հատուցմամբ, ներառյալ աջակցության քարտի կամ վկայագրի միջոցով.

5) Սոցիալական ծառայությունները կարող են տրամադրվել ինչպես համայնքապետարանի աշխատակազմի, այնպես էլ հասարակական, միջազգային դոնոր կազմակերպությունների, անհատների հետ համագործակցությամբ:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԾՐԱԳՐԵՐԻ) ՑԱՆԿ

Հաշվի առնելով համայնքում առկա սոցիալական կարիքների բնույթը և հրատապությունը՝ առաջարկվում է համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում տրամադրել հետևյալ սոցիալական ծառայությունները.

- ***Սոցիալական խորհրդատվություն և ուղղորդում*** համապատասխան պետական մարմիններ
- ***Բնաիրային աջակցություն***՝ նախընտրելի է աջակցության քարտերի միջոցով, որոնք կարող են լինել բազմաֆունկցիոնալ՝ մի քանի ապրանքատեսակ ձեռք բերելու հնարավորությամբ, կամ որոշակի ապրանքատեսակ ձեռք բերելու համար, օրինակ՝ սննդի, հագուստի կամ դեղորայքի քարտեր և այլն: Կարող է սահմանվել նվազագույն ապրանքային փաթեթների ցանկ, որոնք կազմվում են ըստ շահառուի կարիքների խմբի և աջակցման նպատակի
- ***Կենցաղային օգնություն***, այդ թվում՝ անձի տեղափոխման կազմակերպման կամ տեղափոխման հետ կապված ծախսերի հատուցման միջոցով
- ***Բնակարանային պայմանների բարեկարգման, կացարանի ընթացիկ վերանորոգման կամ հարմարեցման աշխատանքների կատարում կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում,*** որը կարող է սահմանվել միայն այն դեպքերում, եթե տվյալ ընտանիքը գտնվում է կյանքի դժվարին իրավիճակում և առաջացած բնակարանային խնդիրները կամ առկա պայմանները կարող են ազդել տվյալ իրավիճակում ապրող ընտանիքի անդամների կենսագործունեության անվտանգության ապահովման կամ կենսական կարևոր կարիքների բավարարման վրա
- ***Տնային խնամք***՝ խնամքի կարիք ունեցող տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար (տրամադրման կարգը և պայմանները սահմանված են ՀՀ Կառավարության 2022 թվականի 1744-Ն որոշմամբ)

- ***Ուսման վարձավճարների հատուցում***
- ***Աջակցություն համայնքի մարզիկներին և մարզական թիմերին***՝ այն մարզիկների ընտանիքներին, որոնք սոցիալապես անապահով են, աջակցել միջհամայնքային, մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերին նրանց մասնակցությանը:
- ***Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ, որոնք փոխանցվելու են համապատասխան կազմակերպություններին:*** Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ ճանապարհածախսի համար կատարված հատուցումներից կարող են օգտվել այն ընտանիքները, որոնք հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում և չեն օգտվում նշված ծառայություններից օգտվելու համար պետության կողմից սահմանված վճարման արտոնություններից:
- ***Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների և մշակույթի խմբակների վարձավճարների հատուցում***՝ սոցիալապես անապահով ընտանիքների համար:
- ***Կոմունալ վճարների հատուցում,*** որից կարող են օգտվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքները:
- ***Ընտանիքի անդամի կորուստի դեպքում աջակցություն***
- ***Այլ սոցիալական ծառայություններ***՝ հիմք ընդունելով համայնքում առկա սոցիալական կարիքների բնույթն ու հրատապությունը:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԾՐԱԳՐԵՐԻ) ՑԱՆԿԻՑ ՕԳՏՎՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Սոցիալական ծառայությունների շահառուների թիրախային խմբերի ընտրության նպատակով առաջարկվում է առաջնորդվել հետևյալ չափանիշներով.

- ընտանիքում խնամառու (անչափահաս, հաշմանդամության 1-ին, 2-րդ խումբ ունեցող, 75 և ավելի տարեկան) կամ ոչ աշխատունակ անձանց և աշխատունակների հարաբերակցության բարձր ցուցանիշի առկայությունը
- հաշմանդամության առաջին կամ երկրորդ խումբ կամ անձի ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունենալը,
- միայնակ կամ անժառանգ տարեց լինելը,
- անապահով ընտանիք լինելը՝ սահմանելով որոշակի միավորային շեմ.

սա նշանակում է, որ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը գնահատվում է հատուկ միավորներով՝ հիմք ընդունելով որոշակի սոցիալական, ֆինանսական կամ կենսամակարդակի չափանիշներ: Կից ներկայացվում է կարիքների գնահատման թերթիկը և միավորների սանդղակը (Ձև 1):

- տեղահանված կամ փախստական լինելը,
- հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում հայտնված լինելը.սա կարող է ներառել մի շարք իրավիճակներ, որոնց ժամանակ անհատը կամ ընտանիքը զգում է սոցիալական, առողջապահական կամ անվտանգության կարևոր սպառնալիքներ, որոնք պահանջում են շտապ և համարժեք աջակցություն (օրինակ՝ բնական աղետները, առողջության հետ կապված խնդիրները, ընտանիքի անդամի կորուստ և այլն)
- կրկնակի կամ բազմակի խոցելիություն ունենալը,
- կամ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ կյանքի դժվարին իրավիճակ համարվող այլ իրավիճակներում հայտնված լինելը,
- Սոցիալական ծառայությունների ցանկից կարող են օգտվել նաև վերը նշված չափորոշիչներին չհամապատասխանող անձիք կամ ընտանիքները՝ կախված այլ հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից:

## ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ՀԱՏՈՒՑՄԱՆ) ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սոցիալական ծառայությունների ցանկով սահմանված բոլոր տեսակի աջակցությունները (հատուցումները) տրամադրվում են բնակչի դիմումի համաձայն՝ հիմք ընդունելով ներկայացված դիմումը, խոցելիությունը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը և սոցիալական աջակցության տրամադրման գործընթացն ապահովող հանձնաժողովի կողմից իրականացված կարիքի գնահատման արդյունքները:

Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Դիմումին կցվում է՝

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթուղթը,
2) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը կամ խոցելիությունը հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում),
3) սույն կարգով նախատեսված սոցիալական կոնկրետ ծառայությունից օգտվելու կարիքը հիմնավորող այլ փաստաթղթեր, անդորրագրեր և այլն:

## ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական ծառայություններ (հատուցում) տրամադրելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, Հանձաժողովի նախագահը՝ տեղակալ, քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են տնային այցելությունների, քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ, որոնք ներկայացվում են:

Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրենները, բնակավայրերի վարչական ղեկավարները յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ) ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Աջակցությունը ցուցաբերվում է Հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած ընտանիքներին:

Աջակցության (հատուցման) չափը առաջարկում է հանձնաժողովը՝ հաշվի առնելով ընտանիքի կարիքը և հիմք ընդունելով սույն կարգով նախատեսված սոցիալական կոնկրետ ծառայության համար սահմանված հատուցման չափը: Գումարի չափի մասին գրավոր նշվում է հանձնաժողովի եզրակացության մեջ՝ Հավելված 1-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարն ընդունում է որոշում աջակցության տրամադրման մասին: Ընդ որում՝ Հանձնաժողովի կողմից առաջարկված հատուցման չափը կարող է փոփոխվել համայնքի ղեկավարի կողմից՝ կախված անհրաժեշտությունից:

## ՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ֆինանսական հատուցումները իրականացվելու են համայնքային բյուջեի «Նպաստներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

2. Մատակարարումներ իրականացնող կազմակերպություններն ընտրվելու են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Ձեռքբերված ծառայությունների կամ ապրանքների դիմաց վճարումները համայնքապետարանն իրականացնում է ծառայություն մատուցած կամ մատակարար կազմակերպություններին՝ իրենց կողմից կոնկրետ անձի մասով ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա:
4. Կազմակերպություններին տրամադրված դրամական հատուցումները կարող են լինել դրանց կողմից մատուցված ծառայությունների կամ տրամադրված ապրանքների դիմաց ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով կատարված դրամական փոխանցումների միջոցով:
5. Հաշիվ-ապրանքագրերի տրամադրման անհնարինության դեպքում դրամական հատուցման համար դիմած կամ ստացած անձը հիմնավորում է հատուցման հանգամանքը համապատասխան անդորրագրերով և փաստաթղթերով, որոնք պետք է հաստատված լինեն Հանձնաժողովի համապատասխան եզրակացությամբ:

*Ձև 1*

# ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնք**

**«–––»----------20----թ.**

**Ընդհանուր տվյալներ**

**Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն** ----------

**Հասցե** ----------

**Հեռախոս** ----------

**Ընտանիքի ժողովրդագրական տվյալները**

| Անուն, ազգանուն, հայրանուն | Կարգավիճակ | Ծննդյան օր, ամիս, տարի |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

**Ընտանիքի իրավիճակը**

| Իրավիճակ | Նկարագիր |
|---|---|
| Բնակարանային պայմաններ | |
| Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ | |
| Աշխատանքով ապահովվածություն | |
| Եկամուտներ | |
| Հագուստով ապահովվածություն | |

| | |
|---|---|
| Սննդով ապահովվածություն | |
| Առողջապահական կարիքներ | |
| Այլ | |

**Լրացուցիչ տեղեկատվություն**

---

**Մասնագետի դիտարկումներ**

---

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**